# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Ջերմուկ** **16/դեկտեմբերի /2022**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14
## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ....10.... անդամներ:

**Ավագանու նիստին մասնակցում էր՝** համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ_Արմինե Ղազարյանը

**Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը**

**Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գոհար Թադևոսյանը**

Լսեցին
***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 16-ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը.*

1.1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից դրամաշնորհներ ստանալու կապակցությամբ Ջերմուկ համայնքի 2022 թվականի բյուջեում կատարվող փոփոխությունները հաստատելու մասին

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Կողմ*----------10 *Դեմ*----------0 *Ձեռնպահ*----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

**Լսեցին**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.***

***/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 25-րդ կետերի պահանջով և նկատի ունենալով, որ համայնքի կողմից ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2022 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին տրամադրվելու են նպատակային հատկացումներ՝ դրամաշնորհներ՝

1. Ջերմուկ համայնքի ««Զատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի և «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ընթացիկ ծախսերի և սույն թվականի սեպտեմբերի 13-ի ադրբեջանական ռազմական գործողությունների հետևանքով Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 27 բնակելի շենքում բնակվող բնակիչներին և «Ջերմուկ համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկին պատկանող գույքին պատճառված վնասների փոխհատուցման ծրագրերի ֆինանսավորման նպատակով հաստատել Ջերմուկ համայնքի 2022 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները՝

1) եկամտային «37-03-00-պետական բյուջեից գույքին պատճառված վնասների փոխհատուցման ֆինանսավորման նպատակով դրամաշնորհ » և «37-09-00-պետական բյուջեից տրամադրվող այլ ընթացիկ դրամաշնորհ» գործառնական դասակարգումներով հոդվածները համապատասխանաբար ավելացնել 14.0 մլն (տասնչորս միլիոն) և 1376.43 հազար (մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունվեց հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամներով:

2) ծախսային «04-05-05-53-վերգետնյա էլեկտրոտրանսպորտային ուղևորափոխադրման ծառայություն» գործառնական դասակարգման «4252-մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» և «4861-այլ կապիտալ ծախսեր» տնտեսագիտական հոդվածներին համապատասխանաբար 4.0 մլն (չորս միլիոն) ՀՀ դրամով և 8.0 մլն (ութ միլիոն) ՀՀ դրամով և «06-01-01-բնակարանային շինարարություն» գործառնական դասակարգմամբ «4861- այլ կապիտալ ծախսեր» տնտեսագիտական հոդվածը 2.0 մլն (երկու միլիոն ) ՀՀ դրամով:

3) Ջերմուկ համայնքի ««ԶԱՏԻԿ» մանկապարտեզ» ՆՈՒՀ և «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿԻ-ի ծախսերի կատարման նախահաշիվների «09-01-01-51-նախադպրոցական կրթություն» գործառնական դասակարգմամբ «4637- ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածը համապատասխանաբար ավելացնել 1328.43 հազար (մեկ միլիոն երեք հարյուր քսանութ հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամով և 48.0 հազար (քառասունութ )ՀՀ դրամով, որից 1280.43 հազար (մեկ միլիոն երկու հարյուր ութսուն հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամը ուղղել սոցիալական որոշ խմբերի՝ 1.5-5 տարեկան կրթության և

զարգացման առանձնահատուկ կարիք ունեցող թվով 9 (ինը) երեխաների նախադպրոցական կրթության ապահովման համար, 96.0 հազար (իննսունվեց հազար) ՀՀ դրամը՝ նույն կազմակերպությունում թվով 4 (չորս) մանկավարժների «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում» ծրագրի շրջանակներում վերապատրաստում իրականացնելու նպատակով:

2. Ի գիտություն ընդունել համայնքի 2022 թվականի բյուջեն հետևյալ ցուցանիշներով՝

*եկամուտներ՝ 974,845,215,0 ՀՀ դրամ*

*ծախսեր՝ 974,845,215,0 ՀՀ դրամ*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ*----10---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա

*Ավագանու անդամներ՝*

| ազգանուն, անուն, հայրանուն | ստորագրություն |
|---|---|
| Արսենյան Վահագն Աշոտի | |
| Սարգսյան Վարդան Ռաֆիկի | |
| Սարգսյան Լուսիկ Ժորայի | |
| Վարդազարյան Աննա Վասակի | |
| Խաչատրյան Գոհար Բաբկենի | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | բացակա |
| Այվազյան Մխիթար Վոլոդյայի | |
| Մկրտչյան Մարինե Մայիսի | |
| Բաբայան Ժիրայր Ժորայի | |
| Մնացականյան Արկադի Ալբերտի | |
| Գևորգյան Մանան Աղվանի | |
| Վահանյան Վարուժան Կնյազի | բացակա |

| | |
|---|---|
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | |
| Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի | |

*Ջերմուկ համայնքի ղեկավար*

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ _____

*Նիստն արձանագրեց՝* Գոհար Թադևոսյանը _____